

այլուր կը պատմէ (էջ 286), այս դադարաբեր ներշնչած էր իրենց Մովսէս վարդապետ, որ այս միջոցին (1609/10) կը գտնուէր Երուսաղէմ<sup>4</sup>: Կ'երեւայ թէ անոնք 1611ին, Փետր. 2ին դեռ Երուսաղէմ էին, վասն զի Դարանազցի իւր Աստուածաշունչին մէջ կը յիշէ այս թուին «զտէր Սարգիս եպիսկոպոսն եւ զտէր Կիրակոսն» որոնք «աշխատող եւ ձեռնտու եւ սիրով յորդորող» եղած են իրեն:

Մտադրութիւն ունէր Դարանազցի ինքնին ընկերանալ անոնց զէպի Սիւնեաց աշխարհը եւ անոնց հետ նուիրուիլ անապատական կեանքի. բայց ապա կը խափանուի այս խորհուրդէն:

Սարգիս եպիսկոպոս եւ տէր Կիրակոս կը մեկնին Սիւնեաց աշխարհը: Կը հասնին Տաթեւ. «սուղ ժամանակս կացեալ անդ» կը տեղափոխուին Չորոյ վանքը, որ նաեւ Յրուանց կը կոչուի. այն ալ յարմար չգտնելով կ'անցնին Թանահատի վանքը. «անտի եւս եկեալ որոնէին առաւել եւս անըոյթ եւ անչիօթ եւ յապահով տեղի, մինչեւ գտին զտեղին, յորում այժմ շինեալ կայ Մեծ Անապատն»: Հոն կը շինեն եկեղեցի եւ խուցեր «ըստ պառաճի անապատի եւ միայնակեցի» «նսեմ եւ մթին

<sup>4</sup> Բացի Մովսիսէ կային Երուսաղէմ ուրիշ արևելահայեր ալ, որոնցմէ կը յիշէ Դարանազցի 1606ին (էջ 606) «Գրիգոր մոնողոն արեղայ, վերակացու հոգաբարձու եւ բազմերախտ աշխատաւոր Գանձակեցի, տէր Սահակ փոքր Կանջացի, տէր Մկրտիչ երէց ամենագովելի, սրբասէր եւ բազմագութ Զուղայեցի քահանայ»: